ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«20» փետրվարի 2025թ. ՄՈՒ/265 -Ա

Ք.Արմավիր

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N ՄՈ/118-2021 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2008 թվականի փետրվարի 25-ի N98-Ն որոշման 4-րդ կետի պահանջը.

որոշում եմ՝

1. Ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային նոր հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի ապրիլի 23-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային նոր հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2014 թվականի ապրիլի 7-ի N30 կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N ՄՈ/118-2021 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-02-20 11:03:23 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆ-ով eID

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2025 թվականի փետրվարի 20 -ի
ՈՄՈ/265 -Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝

Բ. Նիկողոսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական.

Հանձնաժողովի քարտուղար՝

Ց. Սարգսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ

Անդամներ՝

Ա. Ապիտոնյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ.

Ա. Հակոբյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ.

Խ. Սարուխանյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր ինժեներ.

Գ. Գևորգյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ.

Ս. Բուդաղյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ.

Գ.Հարությունյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ.

Ն.Առաքելյան - «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության տնօրեն (համաձայնությամբ)

Մ. Սեդրակյան - «Հույսի Մեծամոր» հասարակական կազմակերպության տնօրեն (համաձայնությամբ)

Ա. Հովսեփյան - «Հայկական կարմիր խաչ» հասարակական կազմակերպության Արմավիրի մասնաճյուղի տնօրեն (համաձայնությամբ)»:

Գլխավոր քարտուղար՝ ***Ա. Հովհաննիսյան***

Недействительная подпись

VERIFIED OCSP 20.02.2025 10:30:42 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023